



41. ՏԵՐՏԵՐԻ ԱՐՋ ՏՂԵՆ՝

Ըլել ա, շի էլել, ժըմընակով մի տերտեր է ըլել, գնացել ա էս տերտերը փետի: Փետատեղը մեկ արջ տերտերին ոաստ ա գալի:

էս Արջը տերտերին ասում ա.— Պետք է գաս իմ մոտ, ինձ հետ խստնվես, մի տարի եզը կգաս տղեդ կտանես, եթե չգաս, մեկ էլ ոաստ կրերեմ քեղ՝ կվերջացնեմ:

էս տերտերը ուշանում ա, շի գնում, տարում ժըմընակ էլի փետի է դնում: Արջը ոաստ է գալի հետը, ասում ա տերտերին, թե.— Դու խի՞ չի էկար ժըմընակին:

Տերտերը ասում ա.— Մոռացա:

Արջը ասում ա.— Ա՛յ հիմի խո էկել էս, տղեդ տար, չէ՛ քո վերջն է:

Տերտերն էլ իրան տղին վերցնում ա, տանում իրան տունը: Տերտերը իրան տանը էդ տղին պահպանում ա. էդ տղեն շուտով մեծանում ա, նա գնում ա երեխանց հետ դռանը խաղալու:

Գնում է խաղալու հարևան երեխանց հետ, մեկ էրեխի կուռն ա կոսրում, մեկ էրեխի ոտն ա կոտրում, մեկ էրեխի գլուխն ա կոտրում: էս էրեխեքը դնում են իրանց տներումը, իրանց հայրներին

¹ Այս հեքիաթի բնագրում մատիտով ուղղումներ են կատարված՝ Լոռու բարձրագույն համալսարանի գարձնելու համար—Մ. Կ.:

ասում են, որ.— Տերտերի տղեն մեր գլուխը, ոտը, կուռը կոտրում ա:

էն էրեխանց հայրները ասում են էրեխանցը, թե.— Բան չկա, էս մի անգամն է. եթե մյուս անգամն էլ ոտներուդ, կուռներուդ կոտրի, էն վախտը մենք տերտերին էլ, իրան տղին էլ կը պատժենք:

էս էրեխեքը էլի գնում են խաղ անելու: էս տերտերի տղեն էս էրեխանց հետ, սկսում ա դրանց թափիլը, կուռներուն կոտրատել:

էրեխեքը եդ գնում են կրկին իրանց հայրներին ասում:

Հայրները տերտերին կանչում են, թե.— Քու տղեդ էս մի անգամ չի, էրկու անգամ չի, մէր էրեխանց կուռը, ոտը, գլուխը կոտրում ա, մենք քեզ ասում ենք, որ քու տերտերութունը չենք ուզում, որ քու տղեդ էդ տեսակ օղպաթները մեր էրեխանց գլուխն ա բերում: Ա՛յ տերտեր, մենք քեզ ասում ենք, որ դուն կամ քու տղին հեռացրու գեղիցը, կամ չէ՛ դու հեռացիր:

էս տերտերը գնում ա իրան տուն, միտքն անում, ասում ա իրան տղին.— Ա՛յ որթի, ժողովուրդը մեզ դեղից հեռացնում. դուրս են անում:

Տերտերի տղեն ասում ա տերտերին.— Ի՞նչ պատճառով են հեռացնում:

Տերտերն էլ ասում ա, որ.— Խաղ անելիս դու հարևանց էրեխաների կուռն ու ոտը կոտրես ես եղբր:

Տերտերն ասում ա.— Մի կուգա ոսկի վե կալ ու գուն հեռացիր:

էդ տղեն ասում ա.— Ես ոսկի չեմ ուզում, էդ ոսկին տար դարբնին տուր, թող նա ինձ համար ինն փտանոց մի շալիկ կապի:

Տերտերը ասում ա.— Շատ լավ կի:

Տանում ա ոսկին դարբնին տալիս, ինն փտանոց շամբալիս կապի:

էդ դարբնին էլ սկսում ա ինն փտանոց շամբալսը, շինում ա ու տալի Տերտերի տղին:

էդ Տերտերի տղեն գնում ա գեղից դուրս, տեսնում ա, որ մի աղքատ մարդ փետի ա գնացել սելով, մի լուծ եզնով, էս մի լուծ եզը հուշապները ուտում են: էս Տերտերի տղեն տեսնում ա, որ աղքատ մարդը սկսում ա լաց ըլել:

Տերտերի տղեն ասում ա.— Ա՛յ աղքատ մարդ, ընչու՞ կը լացես:

Աղքատ մարդն ասում ա, որ.— Ես եկել ի որ փետ տառեմ,

ա՛յ Լն հուշապաները Լզներս կերան. հիմա մնացել եմ ըստի ողորմելի:

էս Տերտերի տղեն ասում ա.— Հուշապաների տեղը դիտե՛ս շանց տաս:

էս աղքատ մարդը ասում ա.— Շատ լավ կլի:

Աղաք է ընկնում աւ դնում հուշապաներին շանց տալի:

էս Տերտերի տղեն ասում ա հուշապաներին.— էս աղքատ մարդը մի լուծ եզը ունի, ի՞նչ եք էն էլ ուտում դուք:

Հուշապաները ասում են.— Եթե կարենանք, քեզ էլ կուտենք:

Տերտերի տղեն ասում ա.— Դե հլա փորձեք:

Ըժում ջիդրի ա գալի Տերտերի տղեն, շոմբախով ամենքին մի՛ւ տալիս տ, հուշապաները խղճանում են ու ասում.— Պա՛, պա՛, պա՛ ի՞նչ զարմանալի մարդ էր սա:

Ասում ա էդ տղեն հուշապաներին.— Հուզում էք գաք էդ աղքատ մարդի փետը տանեք իրան տուն, թե չէ՝ մեկ էլ խփեմ ձեզ:

էդ հուշապաները ասում են.— Տերտերի տղա, էլ ընչո՞ւ կխփես, մենք մեր օժտը կամովը կուզանք:

Դրանք վեր են կենում ու գնում. գնում են փետի կուշտը: Ըսկրսում են դե՛ լծել սելում:

էս Տերտերի տղեն ըժում՝ ուսներուն նստում է՝ քշում տանում Լն աղքատ մարդի տունը:

Գեղացիք տեսնում են, որ հուշապաներին լծած բերում է Տերտերի տղեն:

Գնում են Տերտերին ասում են, թե.— Քու տունդ աստված քանդի, ինչ մեզ հետ օղպաթները բերիր դու Տղեզ գեղիցը մթամ հեռայրինք, որ մեր էրեխեքը դինճ ըլեն, դա հիմա գնացել ա հուշապաները լծել է՝ փետում ու բերում, որ գեղը հուշապաները ծծեն:

էդ խոսքերում Տերտերի տղեն հուշապաները լծած բերում ա էն աղքատ մարդի դուռը:

էդ խալխերը ասում են.— Ա՛, Տերտերի տղա, էդ ի՞նչ օղպաթ էս բերում մեր դեղի գլուխը:

Տերտերի տղեն էլ ասում ա.— Ի՞նչ օղպաթ եմ բերում ձեր գեղի գլուխը:

Ժողովուրդն էլ ասում ա.— էդ հուշապաներին բերել էս, որ գլուղը ծծեն:

էդ տղեն ասում ա.— Մեք վախենալ, էս աղքատ մարդի եղնիքը կերել էին, ընդուր խաթրու ես դրանց լծեցի ու բերեի փետը էդ աղքատ մարդու դուռը. ես էդ հուշապաներին թողուլ չեմ. ձեզ վնաս աւան, դրանց կվերջացնեմ:

Թե՛նց ասում ա ու էդ հուշապներին ամենքին էրկու հետ էն շոմբախով տալիս ա թե չէ՝ սատկում են:

Գեղացոց ասում ա, Թե.— Դուք հըմի էդ հուշապներին դետի՛ն փորեք, ըժում կկորցնեք:

Ըժում ինքն էլ թողում, գնում ա ուրիշ տեղ:

Գնում է տեսնում ծառերի կուշտը հրես մի մարդ ուզում է յաներից ճյուղը կոտրատի, ծառերը տակննով դուս են գալի:

էս Տերտերի տղեն ասում ա, որ.— Հունա՛ր, հունա՛ր, էդ է հունար:

էդ Ծառը կոտրատողը ասում ա.— Հոճար, հունար Տերտերի տղին է հունար, որ հուշապներին լծել է ու տարել. սա ի՞նչ հունար ա:

Տերտերի տղեն ասում ա, թե.— Տերտերի տղեն ըստեղ ըլի, հետը կաղբերանա՛ս:

Ծառը տրկոսպոկ անողը ասում ա.— Ինչպես չէ, կաղբերանամ:

— Դեհ, — ասում ա, — մեկ չըլինք, էրկուս ըլենք:

Ու աղբերանում են, գնում:

Շատ են գնում, քիչ են գնում, տեսնում են մեկն էլ մի սարի տակի նըստած է:

Ասում ա Տերտերի տղեն.— Հունա՛ր, հունա՛ր, ա՛յ էդ հունար, որ էս սարը շալակել ա:

էդ Սարը շալակող մարդն էլ ասում ա.— Հունա՛ր, հունա՛ր, Տերտերի տղին է հունար, որ հուշապներին լծել է ու տարել:

Տերտերի տղեն ասում ա.— Որ էդ Տերտերի տղեն ըստեղ ըլի. կաղբերանա՛ս հետը:

Սար շալակողն ասում ա. — Շատ լավ կըլի:

Դրանք թե՛նց ասում են ու գնում:

Շատ են գնում, թե քիչ, աստո՞ժ գիտի, գնում են, տեսնում, որ հրես մի վերանա շոլում, հրես մի տուն, սրանք ասում են, որ.— էս մեզ համար տուն կլի:

էն իրիկունը ըդտեղը կառավարում են ըտանք: Սրանք ըռավոտը մսլահաթ են անում, որ մեկս հետ ընկնենք, կերակուր բան չիենք, տան կրակ, ճրագ վառենք:

Ասում ա, որ.— Ո՞րս հետ ընկնենք:

Բերում են Սար շալակողին ասում են, թե.— Դու կա՛ց, կե՛րակուրներ բան կեփես:

Իրանք վեր կենում ու գնում են հանդը հորսի:

Իրիկունը, որ Սար շալակող տղեն կերակուրներ բան պատ-
րաստում ա, որ էն տղերքը հորս գնացած, գան որ ուտեն:

Մեկ էլ տեսնում է ճաշի ժամընակը հըրես էկավ մի մեծ կա-
տու, պոչով էս մարդու էրեսին խփեց, էս մարդը նղավեց, իժում
էս կերակուրները կերավ ու գնաց: էս տղերքը իրիկունը էկան տե-
սան ո՛չ կրակ, ո՛չ ճրագ, ո՛չ կերակուր, մի բան էլա չի կա:

Ասում են.— Պա՛, ինչի՞ կերակուր ու կրակ ճրագ չես պատ-
րաստե:

Ասում է էդ Սար շալակող տղեն.— Որ հիվանդացա, չկարո-
ղացա:

Դա ասում ա Տերտերի տղեն, որ.— Մառ կոտրատող, հըմի
էլ դու հետ ընկի ու կերակուր պատրաստի:

Ըժում իրանքը գնում են: Սա սկսում է կերակուրները պատ-
րաստել, ըժում տեսնում է, որ հրես մի կատու էկավ, էս Մառը
ջարդողի երեսին պոչով տվուց, էս մարդն էլ նղավեց, վեր ընկավ,
կերակուրին կերավ ու թողեց դնաց:

էկան իրիկուն Սար շալակողն ու Տերտերի տղեն, տեսան, որ
հըրես կերակուրները բան կա ոչ, էս տղեն էլ հիվանդ ա:

Տերտերի տղեն ասում ա.— Ա՛յ տղա, էդ ո՞նց է, որ մի բան
էլ պատրաստել չես:

Ասում ա թե.— Հիվանդ եմ:

Տերտերի տղեն ասում ա.— էսօր ես պիտիմ եդ ընկնիլ, կե-
րակուրները ես պատրաստեմ:

Նրանք երկուսը գնում են հանդը, Տերտերի տղեն մնում է տա-
նը: Սա կերակուրները պատրաստում է, տեսնում ա, որ մի վախտը
հըրես մի մեծ կատու էկավ տուն մըտավ, որ ուզեց պոչով էս
Տերտերի տղին խփի, էս Տերտերի տղեն էս կատվի շըլընքին խփեց
չոմբախով, գլուխը պոկ էկավ, ըժում պըսպըսալի գնաց, էս տղեն
եղնեն գնաց, դնաց, տեսավ, որ մի ծակով դըվեր ընկավ էդ գլու-
խը, գնաց ինքը մտիկ արավ էն ծակիցը, որ մի հուրը տվեց Տեր-
տերի տղի ևրեսին, էս Տերտերի տղեն էս հորի կշտին նղավեց,
ըժում մի էրկու սըհաթից եդով իրան թոթաշմիշ արավ, վե կացավ
դնաց ուրանց տուն եդ:

Իրիկունը տեսան, որ էս Սար շալակողը մեկ էլ Մառ տըկոա-
ւով անողը էկան, տեսան, որ կրակ, ճրագ վառած, կերակուրը
պատրաստած, թէ տերտերի տղեն ֆեքսուղ ա. ըժում ասեցին.—
Տերտերի տղա, դու խոչադ իր, կրակ ճրագ վառել իս, հիվանդա-
ցել չիս:

Տերտերի տղեն էլ ասում ա.— էկեք էս տեղ:

Տանում ա շանց տալի, ասում ա.— Ա՛յ էս կատուն ձեզ չի-
վանդացրելիս ա ըլիլ:

էդ տղերքը ասում են.— Շատ դուզ ա, դա պոչով մեզ տեր,
մենք նղավեհինք ու հրվանդանայինք:

Տերտերի տղեն ասում ա.— Դե վեր կացեք գնանք, մե մեծ
թուղը վերցրեք ու գնանք:

Դրանք վերցնում են էդ թուղը ու գնում են էդ հորի կուշտը,
էդ Սառ տրեկոպով անող տղի միջքում են դնում թուղը ու կախ
անում են հորի մեջ:

Դա կիսակախ անիլը ասում ա.— Հանեցեք ինձ էդտեղաց,
էրվեցի:

Դրան եդ հանում են:

Տերտերի տղեն ասում ա.— Թուղը իմ մեջքիս կապեցեք:

Կապում են նրա մեջքին ու կախում են հորի մեջ, հոր իջնելիս
Տերտերի տղեն ասում ա.— Քանի ասեմ էրվեցի, դուք կախ թողեք:

էս Տերտերի տղեն հորը կախ ա ըլում, ասում ա.— էրվեցի՛:

Քանի դա ասում ա, «էրվեցի՛», դրանք վեր են թողնում, որ
մնում ա, հասնում ա հորի տակը, էլ չի էրվում, ընդեզ մուտենա-
լում, տեսնում է մի հուշապ քնած կա, մեկ էլ մի սիրուն աղջիկ,
որ էն աղջկա հուրը էրում է, որ հորից էնոր խաթրու շեն կարող
կախիլ: էս տղեն թուրը հանում ա ու էս հուշապի գլխին վրա է
բերում, վեց գլուխը պոկում ա, մեկը մնում ա: Հուշապը օխտը
գլխանի էր:

էս հուշապը ասում ա.— Ա՛յ տղա, մեկ էլ տուր, մեկ էլ տուր:

էս տղեն ասում ա.— Իմ մորիցս մեկ եմ ծնվել:

Տալիս չէ էլ, հուշապը սատկում ա:

— Թուղը,— ասում ա էն աղջկանն էս տղեն,— կապի դու, դու
ել ծերգին:

էդ աղջիկն էլ ասում ա Տերտերի տղին.— Մերգին դու դուս էլի:

Աղջիկն ասում ա.— Ես դուս կերթամ, էն տղերքը քեզ հորիցը
չեն հանի էլ:

Ասում ա Տերտերի տղեն.— Թե իմ աղբերտինքն ին, նրանք
կըհանեն:

— Դե լավ,— ասում ա,— երբոր թենց ա՛ սա մի քար ու շախ-
մախ, որ դու շրխմախին կտաս, ու մի փետե ձի կգա ոտները, վեր
կելլես վրան, էն քամ ոտներդ հուփ կուտաս վրեն, ըժում ծակովը
քեզ դուրս կհանի:

Ի՞նչ ասում ա ու ինքը դու է ըլլում¹։

Հորի գլխի էրկու տղեն տեսնում են, որ էդ աղջիկը էդքան սիրուն ա, «Տերտերի տղին թողունք հորումը,— ասում են,— ու էդ աղջիկը առնենք էրթանք»։

Թողում են. Տերտերի տղեն որքան ասում էր. «Հանեք զիս հորից», մտիկ չեն տալիս ու ասում են.— «Չենք հանի»։

Տերտերի տղեն ասում է.— Ղորդ որ, ընդուր ասում էր աղջիկը՝ «Մերդը դու դուս ելիր, ես որ իլանեմ՝ քեզի չեն հանելու»։

Ըժում ինքը չըխմտիին է տալի, տեսնում է փետե ձին էկավ, դա ձիուն վեր է ըլլում ու էդ ծակով դուս է ըլլում, դնում է, տեսնում որ էդ էրկու տղեն հիրուր տալիս են, թե «էդ աղջիկը ես տի ուզեմ» են ասում է՝ «Ես կուզեմ»։

Տերտերի տղեն շոմբախը վերցնում ա ու էդ էրկու տղին, ամենքին մին խփում ա թը շէ՛ դրանք սատկում են։ Դրանց գցում ա էն ֆորի մեջը, ըժում մի մեծ քարը բերում ֆորի ըղեն քըցում է՝

Ըժում էն աղջիկն ու Տերտերի տղենը իրուր հ՛ուզում են, օխտն օր, օխտը գիշեր հարսանիք է ըլլում։ Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։

¹ Աղջիկը—Մ. Բ.։

